ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

«Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» և «Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ» ՊՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր), կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն,

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ իմացություն, ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Նշված մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Շիրակի մարզպետարան են ներկայացնում՝

ա) դիմում,
բ) մեկ լուսանկար 3 x 4 չափսի,
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
դ) ինքնակենսագրություն,
ե) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,
զ) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված),
է) տեղեկանք մշտական բնակության վայրից,
ը) հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում,
թ) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 21.08.2020թ. ներառյալ:

«Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ՝ **2020թ. սեպտեմբերի 24-ին ժամը 10:30–ին,**

«Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ» ՊՈԱԿ՝ **2020թ. սեպտեմբերի 24-ին ժամը 14:30–ին:**

Մրցույթները կկայանան ՀՀ Շիրակի մարզպետարանի շենքում (ք. Գյումրի, Գ.Նժդեհի 16): Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Շիրակի մարզպետարան (անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 0312 4-90-00-156):